ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի՝ 2018 թվականի փետրվարի 13-15-ը Շվեդիայի Թագավորություն (Ստոկհոլմ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված անձ՝ Սուրեն Քրմոյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ փետրվարի 13-15, Շվեդիայի Թագավորություն

Հրավիրող կողմը՝ Շվեդիայի Թագավորության երեխաների, տարեցների և գենդերային հավասարության հարցերով նախարար Ասա Ռեգներ

Գործուղման նպատակը՝ «Երեխաների նկատմամբ բռնությունը վերջ դնելուն ուղղված լուծումներ» գագաթաժողովին մասնակցություն:

Քննարկված թեմաները՝

«Երեխաների նկատմամբ բռնությունը վերջ դնելուն ուղղված լուծումներ» գագաթաժողովի ընթացքում քննարկվել են համաշխարհային մակարդակի խնդիր հանդիսացող երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարին առնչվող հարցերը, մասնավորապես՝ երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի ուղղությամբ այլ պետությունների կողմից ձեռնարկված քայլերը, այս ոլորտում առկա միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կողմից այս ոլորտում իրականացված բարեփոխումները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

«Երեխաների նկատմամբ բռնությունը վերջ դնելուն ուղղված լուծումներ» գագաթաժողովը հանդիսանում էր բարձր մակարդակի հանդիպում, որի հիմնական նպատակներն են՝

- բարձրացնել իրազեկվածության աստիճանը երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի և երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ,
- խրախուսել նոր գործընկերներին միանալ գլոբալ շարժմանը՝ երեխաների դեմ բռնությունը դադարեցնելու նպատակով,
- իրականացնել տեխնիկական քննարկումներ՝ կիրառելով INSPIRE մոդելը:

Գագաթաժողովը համախմբում էր Գլոբալ գործընկերության և WePROTECT գլոբալ դաշինքի անդամ երկրների ներկայացուցիչներին և հնարավորություն ընձեռեց մասնակից երկրներին՝ միմյանց հետ կիսելու իրենց լավագույն պրակտիկ փորձը:

Գագաթաժողովի շրջանակներում քննարկվեց ընտանիքում և դպրոցում երեխային ֆիզիկական պատժի ենթարկելու խնդիրը և այս համատեքստում կարևորվեց լավ օրենսդրության գործոնը՝ որպես կարևորագույն առաջնային քայլ ֆիզիկական պատժի վերացման ճանապարհին՝ միաժամանակ ընդգծելով դրա ոչ բավարար լինելն այդ խնդրի հաղթահարման գործում: Բացի օրենսդրությունից շեշտվեց նաև սոցիալական պաշտպանության մեխանիզմների դերը՝ երեխաների խոցելիության վերացման նպատակով:

Հատուկ ուշադրության արժանացավ երեխաների նկատմամբ առցանց բռնության և շահագործման կանխարգելման հարցը, ինչպես նաև սահմանվեց, թե հատկապես ինչի վրա պետք է կենտրոնացնել ջանքերը՝ ազգային մակարդակով տվյալ մարտահրավերին դիմագրավելու համար, ներկայացվեցին ներկայումս կիրառվող ընթացակարգերը և լավագույն փորձը:

Գագաթաժողովի շրջանակներում Սուրեն Քրմոյանը նաև ուսումնական այց կատարեց Barnahus Stokholm, որը յուրօրինակ ապաստան էր հանդիսանում այն երեխաների համար, ովքեր բռնության զոհ են դարձել: Այն իրենից ներկայացնում է ոստիկանության, սոցիալական ծառայությունների մանկական հոգեբուժության և դատախազության մարմինների համագործակցության արդյունավետ մոդել: Այս բոլոր մարմինները համագործակցում են՝ ապահովելու համար բռնության զոհ դարձած երեխաներին ցուցաբերվող աջակցությունը:

Հայաստանի մասնակցության արդյունքները

Գագաթաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը մի շարք կարևոր երկկողմ հանդիպումներ է ունեցել, որոնց ընթացքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև ձևավորված սերտ համագործակցությունը, անչափահասների արդարադատության ոլորտում ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնած քայլերը, Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման կարևորությունը:

Գագաթաժողովին մասնակցելու կարևորագույն ձեռքբերումը եղավ այն, որ Հայաստանի Հանրապետությունը միացավ «Վերջ տանք երեխաների նկատմամբ բռնությանը» ցանցին՝ որպես հավակնող երկիր:

Միջազգային համագործակցության այս հարթակին միանալով՝ ՀՀ հնարավորություն է ստանում իրականացնել միջազգային պարտավորությունները երեխաների պաշտպանության ոլորտում՝ ունենալով միջազգային աջակցություն: Ցանցը և դրա ներքո գործող հիմնադրամը կազմակերպական և ֆինանսական աղբյուր կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության խնդիրների լուծման

համար: Ցանցի գերակա նպատակներից է՝ երեխաների նկատմամբ ամենօրյա բռնության կանխարգելումը՝ միջոցառումներ ձեռնարկելով և հասցեագրելով զարգացման ծրագրեր համապատասխան խնդիր ունեցող, ինչպես նաև կոնֆլիկտների և ճգնաժամի մեջ գտնվող երկրներ:

Այս համագործակցության շրջանակներում մասնակից երկրները պետք է արձագանքեն և աջակցեն միմյանց՝ երեխաների նկատմամբ բռնությանը վերջ դնելու գործընթացը հնարավորինս արագացնելու նպատակով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ազգային օրենսդրության մեջ իրականացնեն փոփոխություններ, որդեգրեն այն-պիսի քաղաքականություն, որն ուղղված կլինի երեխաներին պաշտպանելու բռնությունից և շահագործումից, ներառյալ՝ առցանց բռնությունից:

Բացի այդ, անդամակցությունը կբարձրացնի երկրի հեղինակությունը և ազդեցությունը միջազգային գործընկերության ցանցում առհասարակ և մարդու իրավունքների պաշտպանության ցուցանիշների պատշաճ ներկայացման հարցում՝ հատկապես: